

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՊՐՈՖՏԵՍՍ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊԶԲ-2026/16-3-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Xience Pro	Abbott Vascular	Ստենտի նյութը և կառուցվածքը - լազերով կտրված կոբալտ-քրոմի համաձուլվացքից կազմված գլան, ստենտի ծածկը՝ Էվերոլիմուս դեղանյութ արտազատող ծածկ: Ստենտի կառուցվածքը՝ 2.25-3.0 մմ տրամագծով ստենտն ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5-4.0 մմ-ոց ստենտն ունի երեք կարճ և վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Ստենտի եզրային օղը ձևավորված է սիմետրիկ ամրակներով՝ բարելավելու ուղղորդիչ կաթետերի դուրսբերումը: Ստենտի պատերի հաստությունը՝ 0.0032": Ստենտի երկայնաձիգ ճկունությունը՝ գերազանց: Ստենտը ոչ ֆեռոմագնիսական է և ունի բարձր ճառագայթային ուժ: Մետաղական մակերեսի ընդարձակումը կատարվում է՝ 13.3%-ի սահմաններում 3.0 մմ տրամագծի դեպքում, 12.8%-ի սահմաններում՝ 4.0 մմ-ի դեպքում: Լայնացումից առաջացած կարճացումը 0% է՝ 3.0 x 18 մմ ստենտի համար: Անկախ լայնացման աստիճանից չի գերազանցում ստենտի երկարության 5%-ը: Հետագա տեղաշարժման հավանականությունը՝ 4.4%, 3.0 x 18 մմ ստենտի համար: Ստենտի բացման

Նոմինալ ճնշումը՝ 12atm , պայթման առավելագույն ճնշումը՝ 18 atm (բոլոր տրամագծերի ստենտերի համար): Անցման պրոֆիլը 0.0390" (3.0 x 18), ծայրի մուտքի պրոֆիլը՝ 0.017": Բալունի միջին չափսը՝ 0.041 դույմ կամ 1.04 մմ՝ 3.0x18 մմ ստենտի համար: Բալունը բարակ երկակի շերտով է, նյութը՝բազմաշերտ պեբաքս: Ուղղորդիչ կաթետերի ներքին նվազագույն տրամագիծը - 0.056 դյույմ կամ 1.4 մմ (բոլոր չափսի ստենտերի համար):

Ստենտի դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային և ֆլյուրո պոլիմերներից, որոնք օգտագործվում են անոթային կարի համար նախատեսված թելերի արտադրությունում: Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի մակերեսին, 88 µg/cm² : Ստենտի աշխատանքային երկարությունը՝ 145սմ: Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.25, 3.5, 4.0 մմ: Բացված ստենտի մաքսիմալ տրամագիծը՝ 2.0-3.25-ը մինչև 3.75 մմ, 3.5-4.0 -ը մինչև 5.5 մմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից ստենտի պահանջվող չափերն են ըստ երկարության՝ 8, 12, 15, 18, 23, 28, 33, 38 մմ(2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.25, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում): Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականների առկայություն: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը: Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է՝ 1. ապրանքը արտադրողի կողմից ներկայացվող ծագման սերտիֆիկատ և համապատասխանության հավաստագիր: 2. ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ: Նշված

			Երաշխիքային նամակով արտադրողը երաշխավորում է մատակարարի կողմից Հայաստանի Հանրապետություն մատակարարվող ապրանքը, ընդ որում ապրանքն արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի երաշխիքային նամակում հստակ պետք է երևա՝ մատակարարի, մատակարարվող ապրանքի անվանումները և երկրի անվանումը որտեղ նշված մատակարարի կողմից վաճառվող ապրանքը երաշխավորվում է արտադրողի կողմից:
--	--	--	---

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ПРОФТЕСТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕЦДЦП2Р-2026/16-3-БПР< ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
1			